տղայ առաջնորդ ահա կատարեցաւ բանքս այս ի վերայ Օլախաց երկրիս. զի նախարարքն սորա ինչպէս որ կամեցան՝ այնպէս կու կողոպտեն երկիրս այս։... Բարեխօսութեամբ Սրբոյս որ կան ի տըփին յայսմիկ՝ Աստուած խաղաղութիւն տացէ երկրի և թագաւորաց հաշտութիւն։... Որոց Սրբոց Նախահարցն բարեխօսութեամբ ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս՝ Տէր Նիկողայոսին, և ծնողացն՝ Պր. Վարդին, խաթունչային, և կողակցուն՝ Կուլպահարին, և դստերացն՝ Ճաչխաթունին, Օղիտային, և եղբարցն՝ մահտեսի Գասպարին, Ալեքսանոսին, Սիրունին, Միրիճանին, և կողակցուն Սիմային, և դստերացն Հռիփսիմէին, և ամենայն արեան մերձաւորացն. և միջնորդի սորա՝ Վարդապատին, և անպիտան գրչի Սարգիս դպրին, և վարժապետիս՝ Յոհան դպրին. և ծնողացն իմոց՝ մահտեսի Տէր Ովանէսին և Զարդարին, կարդացողացս և լսողացդ, և զՈղորմին ասողացդ. ամէն. Հայր մեր։ — Կարողութեամբն Աստուծոյ և միջնորդութեամբ Սրբոցս ըսկսաք սուրբ գիրքս. և վերջացաւ ի յայսմ վայրի իմում բաժին. և ի յայսմ տեղւոջէս յաւարտ եհան հոգեւոր ծնողքն մեր և խրատատուն Սրապիոն դպիրն. զոր և յուշով աւարտեցաք ի թվականութեանս Հայոց ՌՀԸ ամին։ — Ողորմի Քրիստոս Աստուած զսուրբ Յայսմաւուրքս ի գերութենէ ազատողին, յԱկընցի Եայնի Փիրուխանին և իւր ծնողացն, հօրն՝ Խորին, մօրն՝ Յաչկուլին, և իւր եղբարցն՝ Թամուրին, Աստուածատուրին, Աբրահամին, Յակոբին, Յոհանին, Մովսէսին, և ամենայն արեան մերձաւորաց, և որ զողորմին ասեն. ամէն։ — Ողորմի Քրիստոս Աստուած զսուրբ Յայսմաւուրքս ի գերութենէ ազատող խօճայի եղեցբան (թերեւս եկեղեցպան) Վասիլին, և հօրն Մանուկին և մօրն՝ Մարուցային, և կողակցին՝ խաթունմէլիքին, և եղբօրն խօճայ Թումանին, և որդոյն Օվանէսին և Օհանին, դստերացն Աննինցային և Մարուցային և Ալխաթունին և Հռիփսիմէին, և... Տէր Յովանէս՝ խութինու քահանայի։.. [Յայսմաւուրք ի կեռչա]։

1631·

Թվ. ՌՀԹ, Սեպտ. 20, օրն երկուշաբթի. ի հայրապետութեան Տեառն Տէր Մովսէսի, եկաւ ի Լով նուիրակ Տէր Խաչատուր վարդապետ սրբալոյս մեռոնաւն. և զիս մեղաւորս Խաչատուր արեղայս առաքեաց նուիրակ սրբալոյս մեռոնաւն 'ի յայս աստուածապահ քաղաքս Զամոցա, ի ժամանակս քահանայից՝ Տէր Յակոբին և Տէր Անդրէասին, որ և եկաք և հանդեաք ի տուն Տէր Անդրէաս քահանային, և Աստուած զինքն փառաւորէ ի յայս կեանք և ի յաւիտենականս. ամէն։ [Ճաշոց ի կայսեր. գրատան Վիեննայ]։

1631·

Ով եղբարք իմ սիրելի, յիշեցէք զԹերեվարժ զրչակս՝ զԾերիկ դպիրն՝ որդոյ Նիկոլին. և անզարդութեան գրոյս անմեղադիր լերուք.. գրեցաւ Թվ. ՌՀԹ. դեկտ. 15, օրն վեցշաբթի։ [Ի կամենից։ — Ժամագիրք]։